

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Մանկեան անդեղային օգտախարոսութիւնն
ու գործածութիւնը :

Եւ լսենք ծերունիներէն թէ աս կողմերս եկող սուրբ Սմիածնայ նուիրակներն հետերնին ունենալով աս մանկլեան կուտէն, երբեմն կը գործածեն եղեր ասոր անոր տալով. սուրբ Սմիածին ուխտի գնացողներէն ոմանք ալ հետերնին հոս (Սոստանդնուպօլիս) կը բերեն եղեր. և անոնցմէ աս կուտը Պէգճեան մեծապատիւ (Յարութիւն Միրային ձեռքը անցած ըլլալով, սովորութիւն ըրած էր որ խոստովակ՝ ունեցողներու կուտար, որոնք մէկ անգամ խմելով կ'առողջանային : Եւ որովհետեւ քսան տարի առաջ աս Միրային տանը մէջ վարժապետութեան պաշտօն ունենալովս, կը տեսնէի աս կուտը և ունեցած օգուտները, անկէ հետաքրքրութիւն մը եկած էր ինծի աս կուտին վրայօք պէտք եղած տեղեկութիւնը առնել մէկուն մէկալին հարցնելով :

Ետքը հայերէն գրով Հնդկաստան տալուած թուղթ մը ձեռքս անցաւ, քիչ մը տեղեկութիւն ալ անկէ առի. վասն զի ան թղթին մէջ աս կուտին զանազան օգտակարութիւնները կը յիշատակուէր. և գիտնան ընթերցողք որ գործոյս մէջ յիշատակուած հայերէն օրէնսէ աս թղթին համար կ'ըսենք. և թէպէտ տպածը քովս չկար, բայց քանի մը գաղափարեալ օրինակներ ձեռքս իյնալով՝ անոնցմէ ամենէն ընտիրը կարդացի ու ճիշդ օրինակը գործոյս ետեւը գրեցի :

Յետոյ երբոր սուրբ Երուսաղէմ գնացի, Հնդկաստան նուիրակութեան գնացողներու հարցընելով՝ քանի մը բան ալ անոնցմէ իմացայ. ետքն ալ Եւրոպացւոց զանազան դեղապատում գրեանքը կարդալով՝ ուրիշ շատ բաներու վրայօք ծանօթութիւններ առի, թէ

Թնչպէս հին ատենի բժիշկները ատեն ատեն փորձեր ընելով աս կուտին օգտակարութիւնը իմացեր են : Տեղ տեղ, ատեն ատեն ես ալ շատ փորձեր ըրի, և ուրիշ նոր բաներ ալ գտնելով և շատ օգուտներ տեսնելով՝ իմացայ որ աս կուտը սքանչելի զօրութիւններ ունի. ուստի մտքէս անցաւ որ կարելի է թէ ժանտախտի դեղ ալ ըլլայ : Եւ աջ իբրեւ նախապահող դեղ մը կը կարծէի, և փորձեցի տեսայ որ ստուգիւ անանկ է. ետքը բռնուողին տալն ալ կրնայ մարել ըսելով՝ քանի մը մարդու վրայ աս բանիս փորձն ալ ըրի, և տեսնելով որ յաջողեցաւ՝ հաստատութեամբ միտքս դրի որ աս կուտը ժանտախտի ելունդին դէմ ալ զօրաւոր դեղ պիտի ըլլայ :

Եւ որովհետեւ ասոր փորձերը անձամբ ընել վիճակիս չէր յարմարէր, շատերու հետ խօսեցայ և կերպն ալ ցըցուցի. շատին ալ դեղը տուի որ պէտք եղած տեղը գործածեն : Եւ անց մէջ աւելի սրտոտ գտնուեցաւ Եսսգիւղի ուսումնասէր Տէր Պէտրոս վարժապետ քահանան, որ 1836ին երբոր սաստիկ կը բանէր աս ցաւը՝ հարիւրի չափ հիւանդի տուաւ և փորձը հաստատեց. ետքն ալ Եսկիւտարու գիտնական Տէր Յովհաննէս քահանան ալ աս բանիս ետեւէ եղաւ. նոյնպէս ուրիշ շատ մարդիկ ալ նոյն ժանտախտին ատեն փորձեր ընելով տեսեր են որ շատ օգտակար եղեր է. բայց շատերը վախնալով՝ հիւանդ ունենալին ծածուկ կը պահէին ու առողջանալէն ետքը մեզի կ'իմացընէին : Եւ անց ամենուն մտիկ ընելով չորս բան դիտեցի .

Ա. Ով որ աս երկու տարուանս՝ մէջ սովորութիւն ըրաւ ամէն օր կամ շաբաթը երկու իրեք անգամ աս դեղէն խմելու, մէկն ալ ժանտախտէ չբռնուեցաւ :

Բ. Հիւանդի քով կեցողները, մինչև երիտասարդներն անգամ, աս դեղէն օրը մէկ երկու անգամ խմելով, անոնք ալ չզարնուեցան :

Գ. Ով որ բռնուածին պէս ճարպիկ գտնուեցաւ ու մէկէն աս դեղէն խմեց, քսանըչորս ժամուան մէջ ոտքի վրայ անցուց աս ցաւը :

Դ. Քսանըչորս ժամէն ետքն ալ ով որ սիրտ ընելով աս դեղը կարգով կանոնով առաւ, հինգ վեց, շատ շատ տասներհինգ օրուան մէջ առողջացաւ :

Սիայն թէ գործածուածեան դիւրին կերպ մը չըլլալուն պատճառաւ շատերը մէկէն կը ձանձրանային, ու մէկ երկու անգամ հիւանդին տալով երբոր կը տեսնէին որ օգուտ մը չընէր, դեղը վար կը զարնէին : Ուստի միտք յօգնեցուցի դիւրացընելու կերպ մը գտնելու համար . և տեսնելով որ աս բանս ալ ըստ բաւականին յաջողեցաւ, կամք ըրի որ ասանկ դժուարին ախտի մը օգտակար դեղը հրատարակուի : Ուստի հոս մանիւեան կուտին և անոր ժանտախտի դէմ դեղ ըլլալուն վրայ պիտի խօսինք իրեք յօդուածով . նախ՝ թէ ինչ է մանիւեան կուտը և անոր բնութիւնը և զօրութիւնը :

Երկրորդ՝ թէ ինչպէս պիտի ըլլայ գործածուածեան կերպերը :

Երրորդ՝ թէ ինչպէս ժանտախտի դէմ պէտք է գործածել :

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ինչ է մանիւեի կոտը, և իրեն բնութեանը, և զօրութեանը վրայ :

ԱՏԻՆԱՑԻՔ աս կուտին անուն կուտան Քապո փոռ-իսթիքս կամ Լնեանցիա աֆաա, (Նաղղիացիք, Քէճ Կը սէնը Լնեա, Լատալացիք, Քալա Կի սանը) Լնեանցիո, որ ըսել է սորբ Լֆնափոսթ բաղլայ :

Սենք Հնդկաստան տպուած հայերէն օրինակին համեմատ Սանիլի կոտ կ'ըսենք . և զօրաւոր դեղթափ ըլլալը

տեսնելով՝ աս գործոյս մէջ անուն դրինք Լնդեղայ մանիւեան :

Երեւեան Հնդկաստանի կողմերը Ղափոնի սահմանները հազար երկու հարիւրէն աւելի կղզիներ կան, որ Փիլիպպեան կղզիք կ'ըսուին . ասոնցմէ մէկն ալ է Սանիլա կղզին իւր համանուն քաղաքովը . միայն աս կղզիէն կ'ելլէ եղեր աս կուտը :

Են կողմերը սուրբ Լգնատիոս անունով կղզի մըն ալ կայ, մեծ նաւահանգիստ է, ուստի կամ աս կղզիէն Լարուպա աս կուտը գալուն, կամ սուրբ Լգնատիոս քարոզիչ մը Լարուպացոց ծանօթացընելուն համար, Լարուպացիք սովորեցան ըսել սուրբ Լգնատիոսի բաղլայ :

Ե կուտին տունկը որթի տեսակնէն մէկն է . իսկ տերեւը մեզի անծանօթ է, վասն զի ան ձևով տերեւ աս երկիրներս չգտնուիր, ծաղիկը նուան ծաղիկ պէս է, իսկ պտուղը որ պըշափ կ'ըսուի եղեր, մեծկակ ինձորի չափով, թուրինջի կեղևի հաստութեւ . միայն թէ ամուր է ու հնդկերկուզի՝ գոյն ունի . մէջը կարգ կարգ բարակ մաշկեր են, անոնց մէջտեղն է աս կուտը, որ վեցէն մինչև տասուիրեք հատ կ'ըլլայ եղեր :

Ե պտուղիս համար է որ Լարֆիլկըսէ հայ օրինակը, և ան կողմերը շատ յարգի է ու մեծամեծները կը գործածեն եղեր՝ գինի կամ ջուր խմելու, օգտակար սեպելով :

Սովորութիւն եղած է աս պտուղը ամբողջ չկտորած հոս բերել, ուստի տեսած չեմ . միայն թէ սուրբ Երուսաղէմի նուիրակ Երրահամ վարդապետը հետը հինգ վեց հատ ամբողջ բերած ունենալով, գերապատիւ Սիրակոս Երբեպիսկոպոսը և Լսկիւտարու Եւաջնորդը տեսեր և առեր գործածեր էր, նա պատմեց մեզի :

Եդ ասոր կուտերէն ոմանք սևուրակ են, ոմանք մոխրագոյն, ոմանք ալ թափանցիկ, կաղինի մեծութեամբ, ձև

1 Լո. Faba purgatrix, Ignatia amara. Գ. Դ. Fève de Saint-Ignace. Խո. Fava di Sant' Ignazio.

1 Հնդկաստանի ձեռնարկ :

ձև, անկիւնաւոր, եղջիւրի պէս կարծր որ խարտոցով ալ դժուարաւ կը մաշի. համը լեղի, և փոշին ցորենագոյն, ու մանցն ալ աւելի մթնագոյն:

Եւ կուտը ջուրի մէջ մնալով կ'ուռի ու կը կակուղնայ. ան ատենը կտրոցով ալ կը կտրուի և կը տաշուի. չորնալէն ետքը՝ նորէն կը կարծրանայ:

Կուտ մը քանի մը օր ջուրի մէջ մնալով, ճերմակ փոքր ծաղիկ մը ունեցաւ. կ'երևնայ որ եթէ թարմ կուտ ըլլայ, տաք տեղ տնկելով ու խնամով պահպանելով՝ կը բուսնի ալ:

Եւ որ աս կուտը Հնդկաստան հանդիսացեալ դեղ է զանազան ցաւերու դէմ, և օձի ու կարճի խածուածքի և մահադեղի դէմ՝ դեղթափ: Եւ յոյնպէս Լարոպայի նախնի բժիշկներն ալ ընդունեն և կը գործածեն եղեր. որով աս երկու տարուանս մէջ շատ գտնուեցաւ հոս դեղածախներուն քով, և Լարոպա ալ, ուրտեղաց գրեցին և բերել տուին:

Իսկ աս քսան տարուանս մէջ եղող բժիշկներուն շատը լաւ չճանչցան աս կուտը, ոմանք ալ գիտենք ըսելով վար զարկին. ուրիշներն ալ վէճ ըրին թէ թոյն է. որովհետեւ նորասէր վարպետները անով իմաստուն կը սեպուին երբ որ հիններուն փորձերը փութ կը հանեն, և նոր գիտերու ետեւէ կ'ըլլան:

Եւ որ եւ քաղկականութեան արհեստն ալ այնչափ թեթեւցողն որ մինչև բոլոր արհեստն ու բժշկութեան վարպետութիւնը արեան և խէժի վըրայ կը պրտըտցունեն. իբր թէ արիւնով հոգին տեղացը կը խախտեն, ետքը կը դառնան խէժով փակցընելու ջանք կ'ընեն. եթէ ըլլայ՝ վարպետ են, ապա թէ ոչ՝ մարդիկ հաշուով համրանքով իրենց յանձնուած չեն:

Հին բժիշկներն ալ որ աս կուտին համար կը գրեն՝ միանգամայն կը զգուշացնեն, ուստի չափ, և ժամանակ կը նշանակեն. և աս խօսքն ալ կը գրեն թէ աս կուտը թէ դեղթափ է և թէ թոյն. և անանկ թոյն մըն է որ ասոր դեղթափը դեռ գտնուած չէ: Եւ որ վրայ քիչ մը երկար խօսելը հարկաւոր է:

Եւ դեղթափ է ըսելին չենք կրնար ուրանալ. վասն զի ան դեղն որ մահադեղին դէմ կը դնէ, օձի և կարճի թոյնը կ'առնէ, ինչպէս փորձուած էր՝ մենք ալ փորձ ըրինք, ապա ստոյգ դեղթափ կ'ըլլայ: Եւ անաւանդ որ Հնդկաստան աս դեղը գտեր են և փոխառած թունաւոր խէժին դէմ. որուն պատմութիւնը տեղեկութեան համար լրացնուս համեմատ հոս յիշատակենք:

Հնդկաստանու հարաւային կողմերը կղզի մը կայ՝ Յաւա կամ Շաւա անունով, որ Պաթաւիա անունով մեծ քաղաքն ունի: Եւ կղզին կը բուսնի աս ուրիշաս խէժին ծառը. ծառն ալ խէժն ալ թունաւոր. անանկ որ երեսուն մը ղոն հեռու աս ծառին շրջապատը ամենեւին խոտ չբուսնիր, և ան խոտ չբուսած տեղն ալ մարդ ոտք չկրնար կոխել. զի փրչած հովը գայ մարդուն դըպչի նէ, մէկէն կը մահացնէ, կ'ըսեն:

Եւ զի աս աստիճան թունաւոր ծառին մօտենալ հնարը չկայ՝ բայց միանգամայն խէժն ալ շատ հարկաւոր է, որովհետեւ անգութ պատերազմական ըլլալով, կուռի ատեն թուրերնին և տեգերնին աս խէժով կ'օծեն և անանկ կը պատերազմին եղեր, որ թշնամիին անմիջապէս տեղին ալ զարնեն նէ, աս խէժով օծած ըլլալով թունաւոր է ու անվերջ մեռցնէ, ուստի իրենց մէջը սովորութիւն են ըրեր որ մահապարտները չեն մեռցուններ, կը խրկեն որ աս խէժը ժողովէն բերեն. հինգ վեց հոգիէն մէկը հազիւ ողջ կրնայ եղեր դառնալ. ան ալ թերեւ զով օղի հանդիպելով, կամ հովը միւս կողմը տանելով ասոր թոյնը՝ մարդն ալ փութով ընկուզի չափ բան ժողովելով՝ մէկէն կը բերէ իշխանին կուտայ. ան ատեն զինքը ազատ կը թողուն, և շատ ալ պարգև կուտան: Իսկ թէ որ մարդը սրտոտ գտնուելով քիչ մը բան ալ իրեն համար ժողովէ ու ծածուկ պահելով ետքը ծախէ՝ մեծ վաստակ կ'ընէ:

Եւ երջապէս աս խէժով շատ մարդ խոցուած մեռնելէն ետքը, գտեր են ասոր դէմ աս մանիլի կուտը. վասն զի

կամ ասոր փոշին վերքին վրայ կը ցանեն՝ կամ ջրովը կը շփեն և կ'աղէկցընեն : Ուստի առակ եղեր է իրենց մէջը թէ ուփափան ալ մէկ ստրկի եղաւ . վասն զի ասոր ալ դեղը գտնուեցաւ : Եւ որ րեմն ասանկ թունաւոր և մահաբեր խէժի մը դէմ դնող և ըռննոցընողը՝ ի հարկէ գեղթափ պիտի ըլլայ :

Թոյն է ըսենուն ալ պատճառը աս է որ Եւրոպայի նոր բնալոյծները աս կուտը լուծելով մէջը գտեր են Բրուսիոյ թթուութիւն՝ ըսուած թոյնը . որ չէր ըսուած ծաղկին մէջէն ալ կ'ելլէ եղեր : Եւ նոր գտնուած թոյններէն ըլլալով՝ դեռ ասոր գեղթափը գտած չեն :

Եւնք աս թոյնը չտեսանք , թէպէտ և շատ մարդու տուինք , երիտասարդի , ծերու , տղու . և կրնամ ըսել թէ երկու հազար մարդու տուածս պիտեմ , սակայն մէկին աս թոյնը փնաս չըրաւ :

Ինչպէս ուրիշներէն լսեցի որ կամ տաք ջրով գործածեր են , կամ ջերմոտ մարդու վրայ ցրտութիւն եկած ատենը տուեր են , կամ ժանտախտէ բռնուողները որ ի հարկէ շատ խմած կ'ըլլան , աղէկնալ նուն պէս՝ տաք բան ուտելով Եւրոպայ եղեր են . ասկէ միտքս կը վկայէ թէ կրնայ ըլլալ որ թոյն ունենայ . բայց աս թոյնին ոյժ տուողը տաք ջուրը պիտի ըլլայ , կամ իսկոյն տաք բան ուտել և խմել . կամ խմողին ցուրտ տրամադրութիւնը , կամ ծերութիւնը : Եւնք ընայ թէ տգէտ գործածողներ տեսնելով որ ամէն դեղ տաք կը տրուի , կարծեր են որ աս ալ անոնց պէս տաք տալու է , և անանկ տալով փնաս տեսեր են . պատճառը չիմանալով , առաջըր առնելու կերպը չգիտնալով , ասանկ ըսքանչելի գեղթափին անունը թոյն հաներ են , և գրեր են : Չափին և գործածութեան վրայ ալ շատ զգուշութիւններ կուտան գեղարարները , անանկ որ չափահաս մարդու քսանըջորս ժամուան մէջ մինչև ութը ցորենի հրաման կուտան . ան ալ կամաց կամաց խմելու է

որ գլխուն չզարնէ՝ չմեռցընէ . մենք ստիպուելով ինչուան քսանըջորս հատ տուինք , և սակայն փնաս մը չտեսանք :

Եւնք վեց ամսուան մէջ քսանըջինգ կուտ հարելով , առտու իրիկուն բան գործ ընելով , միայն ինքը խմեց . ամենեւին փնաս մը չտեսնելէն զատ՝ ալ աւելի զօրացաւ : Եւ շատ մարդու տուինք զանազան ցաւերու համար , ամենուն ալ օգնեց և ոչ թէ փնասեց . քիչ մարդ եղաւ որ ոչ օգուտը տեսաւ և ոչ փնասը :

Եւնք ընդհանուր գեղագործութեան գրքի մը մէջ շատ վար զարկեր են աս գեղս , ըսելով թէ առաջ մեծ գեղ էր , և շատ կը գործածուէր , բայց հիմա ամենեւին անընդունելի է ազնուականաց . բայց գեղացւոց համար կրնայ գործածուիլ ըսեր են : Եւ իրաւ է աս խօսքը . վասն զի բժշկաց ինդիքն ալ աս է որ ազնուականները գեղ չճաննան , իրենց կարօտ մնան . իսկ գեղացիներէն իրենց օգուտ չկայ . անոնք ի հարկէ պիտի գործածեն : Եւնք ալ որ օգուտը տեսանք , ասոնց ասանկ վար զարնելուննայելով՝ շողոքորթութեան համար չենք ծածկեր . թող գեղացի սեպուինք օտարի առջև , բան թէ նեղ օրերնիս օտարէ անհոգութիւն գրտնենք :

Եւնք ալ քիչ քիչ ըսելով ըսածիս պէս զգուշութեամբ գործածելէն ետքը , և որչափ կարելի է չափը պահելէն ետքը , թոյն չէ , դեղ է՝ և գեղթափ է , անվախ համարձակ գործածէ , որ ատեն որ կ'ուզես , թէպէտ ինչ ցաւ ըլլալը չես ալ կրցեր լաւ հասկընալ :

Բայց աս գեղին վրայ , ուրիշ գեղ մի առներ , և ամէն բժշկի զքեզ մի հաւտար . և թէ որ աս գեղէն շատեկ խմցուցիր՝ արիւն առնելէ ալ զգուշացիր :

Եւնք զի տղայ մը հիւսիս եղած էր , աս գեղէն քանի մի անգամ խմցուցի , ետքն ալ արիւն ալ առեր էին . թէպէտ ըռննոցաւ , բայց վերջը սաստիկ բորոտեցաւ . սակայն քիչ խրմողներն որ առիւն առին , փնաս չտեսան : Իսկ թէ որ գեղթափը գտնուած չէ ըսելու որ ըլլան , կրնամ ըսել թէ իր գեղթափն է ինքն :

Սէկը ջերմ ունեցողի մը համար կուտ մը կուտայ, որ հարեն ու խմբը նեն. անոնք սխալ իմանալով տաք ջրով կուտան, և տաք պահելու ետեւէ կ'ըլլան. մէյմ'ալ կը նային որ բոլոր մարմինը և ըզունկները կը կապուտնայ: Սէկէն դեղը տուողին իմաց կուտան, կ'իմանայ սխալումը, վրայէն նորէն պաղ ջրով կուտայ, ու շուտով կը լաւցնէ:

Պ. Պ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նոյն - Լ'42:

Լ'30 տեսակ ծովային թռչուններն խիստ շատ են, և գրեթէ ամէնքն ալ կամ ձկներով և կամ սատակներով կ'ապրին: Տեսքերնին տգեղ է, ձայներնին անախորժ. բնութեամբ կատաղի, և այնչափ անյագ են, որ չէ թէ միայն ձկանց համար պատրաստուած կարթովն կը բռնուին, հապա նաև տախտըկի մը վրայ նկարուած ձկներու վրայ ալ կ'իջնան և կերակրոյ համար իրարու հետ ալ անդադար կը կուռն: Լ'յս թռչնոց կտուցն սուր երկայն ու երկու կողմերն տափակ է, ծայրն ալ կեռ. պոչը ճեղք չունի և ոտքերն երկայն է, մատուղներն ալ միակտոր մաշկով պատած է, գլուխն հաստ և կարծես թէ ուսերուն մէջ մտած է: Լ'սոնք ծովեզերքն աղէկ կը վազեն, ջրոյն վրայ ալ արագապէս կը թռչին: Նոյն մօտ լեռներուն ժայռերուն վրայ կը նստին, և ինչուան հարկը փարսախ տեղ ցամաքէն կը հեռանան. և ամէն կողմներն ու աղի ջուր եղած տեղեր կը գտնուին: Սխերնին պինդ և հոտած է:

Հոս ասոնց մէկ քանի տեսակն դրնենք. որոնց շատը գունով կը տարբերին իրարմէ. և այս թռչնոց գոյնը միշտ

միակերպ չէ, քանի որ տարիքնին առնեն գոյներնին ալ կը փոխեն:

Վիխաւոր տեսակներէն մէկն ծովու Բազմագունի Լ'նգըն է, քսան բթաչափ երկայնք ունի. վրայի կտուցին ծայրը կեռ՝ տակինն վրայինէն քիչ մը երկայն, աչքերն մոխրագոյն, գլուխն խիստ խոշոր, կոնակն ու վիզն բաց մոխրագոյն է, թւերուն երկայն փետուրներն սևակալ, կուրծքն փորը և ազդերքն ճերմակ, ոտքերն նարնջի գոյն, եղունգներն սև:

Սարդուն մէկն այս տեսակ ծովու Լ'նգը մը տեսեր է, որ պզտի կենդանիներու հետ կը ծեծկուի. շուն ու կատուի հետ կուռելու ատեն՝ անոնց պոչն խաճնել կը սիրէ եղեր. ճերմակ թաշկինակ ցուցնելուն որչափ ձայն ունի կ'ըսեն կը կանչուրուտէ վախէն: Ս'րիշ մ'ալ ասոր ընտանեցածն տեսեր է որ ամէն օր նոյն ատեն կ'երթայ խոհակերոցին դրան առջև կը կենայ եղեր որ իրեն կերակուր տան. շատ անգամ ալ տնեցիք սեղանէն ելլելէն ետեւ ասիկայ ներս կը մտնէ թւերն բացած, ու ձայներով կերակուր կ'ուզէ եղեր: Ըստ տխուր թռչուն է կ'ըսէ պատմողն, կարծես թէ երեսէն դառնութիւն կը կաթէ. ամենևին չթողուր որ մէկն իրեն մօտենայ, և մօտեցողին վրան կը վազէ կը կտցէ: Ս'րիշ կենդանիէ չվախեր, վրանին ալ երթալու սիրտ չընէր՝ ինչուան որ իրենք չգան:

Լ'սոր էքն միայն պզտիկութեամբ կը տարբերի արուէն:

Նոյն Լ'նգըն հիւսիսային ծովերուն մէջ շատ կը գտնուի, երբոր այն տեղուանքն կէտ ձուկէն բռնեն, ասոնք հազարներով անոր վրայ կը թափին ու այս դիէն այն դիէն խաճնելով մէյմէկ պատառ կը փրցնեն կ'ելլեն կ'երթան: Լ'ս բաւական չէ, շատն ալ լեռան պէս ձուկը առջևին ունենալով՝ դարձեալ կը նային որ իրարու բերնէն ալ յափըշտակեն:

Տեսակ մ'ալ կայ ասիկ պզտիկ, որ կտուցի ծայրն սև է, աչքերն մանր ու ամբողջ սև. միայն թւերուն վրայ բաց